

**ԴԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄԱԽԱՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 2016թ.  
ՔԱՌՈՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ\***

**ՈՒՄԱՆ ԿԱՐԱՎԵՏՅԱՆ**

**Բանալի բառեր՝** Ղարաբաղյան հիմնախմնդիր, Յայաստան, Աղրբեջան, Արցախի Հանրապետություն, քառօրյա պատերազմ, անվտանգություն, ռազմական էսկալացիա, ԵԱՀԿ Մինսկի խումբ:

2016թ. ապրիլի սկզբին Արցախի Յանրապետության և Աղրբեջանի միջև սահմանային շինան գծի երկայնքով ռազմական գործողությունները թերևս իրենց ծավալներով աննախադեպ էին 1994թ. մայիսին հրադադարի մասին եռակողմ համաձայնության ստորագրումից ի վեր: Ապրիլյան քառօրյան արանձնանում էր նաև հակամարտող կողմերին տված դասերի առումով: Կարծում ենք, որ բանակցող կողմերը Յայաստանի Յանրապետությունն ու Աղրբեջանը, ինչպես նաև հակամարտող կողմ հանդիսացող Արցախի Յանրապետությունը, ռազմական այս էսկալացիայից հետո հնարավորություն ունեցան ինչպես վերաբերելու իրենց հնարավորությունները, այնպես էլ հստակ զնահատելու սեփական մերուժը և տեսնելու այն բացերը, որոնք ունեն ռազմապաշտպանական համակարգում: Մյուս կողմից էլ, այն վեր հանեց հակամարտության կարգավորման շուրջ աղրբեջանական տակտիկայի որոշ երանգներ, որը, կարծես, պետք է որ լրացուցիչ պահեցնող ազդակ լինի հայկական կողմի համար պաշտպանունակության բարձրացնան ուղղությամբ հետագա գործընթացում ավելի հետևողական լինելու և հակառակորդի սպառնալիքներին ավելի ռեալ գնահատական տպալու տեսանկյունից:

Սույն հոդվածով նպաստակ ունենք ներկայացնելու Ղարաբաղյան հիմնախմնդիրի կարգավորման գործընթացում տեղ գտած փոփոխությունները 2016թ. ապրիլյան ռազմական գործողություններից հետո ինչպես բանակցային գործընթացում, այնպես էլ կողմերի տակտիկական գործողություններում: Որպեսզի առավել հստակ պատկերացում կազմնենք հիմնախմնդիրի զարգացնան մերօրյա փուլի մասին, նախ և առաջ անհրաժեշտ է վեր հանել այն պատճառները, որոնք բերեցին ռազմական էսկալացիայի կամ մեծ հավանականությամբ կարող էին նպաստել դրան:

Նախ և առաջ, անհրաժեշտ է նշել, որ վերջին տասը տարիների ընթացքում Աղրբեջանը, հենվելով էներգոդարների վրա, բազմապատկում է ռազմական ուղղությամբ ծախսվող գումարի չափը, որն ուղղվում է ինչպես ռազմարդունաբերության զարգացմանը, այնպես էլ բանակի տեխնիկական միջոցների բարելավմանն ու նոր սպառազինությունների ծնորքերնամբ: Թերևս այս գործընթացը որոշ չափով թուլացավ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով և Աղրբեջանում հասունացած տնտեսական ճգնաժամի պայմաններում[1]: Մյուս կողմից էլ պաշտոնական Բարուն պետական քարոզամեթենայում և Ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ հրետորաբանությունում ուժեղացրել է սպառնալիքների և ռազմական ճանապարհով խնդիրները լուծելու մասով շեշտադրությունները: Սակայն կարծում ենք, որ առնվազն պաշտոնական երևանի ու Ստեփանակերտի համար սա չափով է անակնկալ լինի, քանի որ նման մասշտարքի սպառազինություններ ծնոք բերող պետությունը մի օր կիրառելու է դրանք:

Մեր կարծիքով, 2016թ. ռազմական էսկալացիայի պատճառները բավականին խորային են ու բազմաբովանդակ: Դրանք կարելի են բաժանել տնտեսական և քաղաքա-

\* Հոդվածն ընդունվել է 30.01.2018:

Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.թ., դոցենտ Վ.Պետրոսյանը:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Կան մասերի: 2014-2015 թվականների ընթացքում աղրբեջանական ազգային արժույթ՝ մանաթը, մեծ չափով հնֆյացիայի ենթարկվեց, իսկ 2015թ. տարեվերջին այն անկման ևս մեկ հզր փուլ գրանցեց. ստացվեց այնպես, որ Աղրբեջանի ազգային արժույթ ավելի քան 40 տոկոսով կորցրեց իր գինը դոլարի համեմատությամբ վերջին երկու տարիների կորպաժքով: Սա չէր կարող չազդել երկրի տնտեսության վրա, որը մեծ վնասներ կրեց և հայտնվեց բավականին ծանր խնդիրների ճիշտանում[2]: Այս ամենին գումարվեցին նաև երկրում տիրող էրնուոցիալական բնույթի խնդիրները, որոնք լրացուցիչ գլխացավանք էին ստեղծում Ալիսների վարչակարգի համար: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ 2015թ. վերջի դրությամբ Աղրբեջանը ընկողմանը էր բավականին խորը սոցիալ-տնտեսական ծգնաժամի մեջ, որը կարող էր պայմանավորացնել լիներ իշխող վարչակարգի համար և բերել անկախատեսելի հետևանքների: Այս պարագայում վերջիններս փորձելու էին գործի դնել արդեն իսկ փորձված և անդավաճան գործիքներից մեկը՝ ընդհանուր թշնամու զաղափարի թարմացումը աղրբեջանական հասարակության մեջ և վերջիններիս ուշադրությունն այս ուղղությամբ շեղելու բաղաքականությունը:

Արդեն իսկ նշեցինք, որ տարիներ շարունակ պաշտոնական Բարուն խոսում էր հայկական կողմի նկատմամբ ունեցած հակայական ռազմական առավելության մասին, որն արտահայտվում է ինչպես սպառազինություններում, այնպես է բանակի թվակազմին ու ճարտունակությամբ: Մարմար գումարվում է նաև աղրբեջանական համրությամբ տարիներ շարունակ հրամանվող այն թեզը, թե Յայաստանը պատմական Աղրբեջանն է, հայերը ագրեսոր են ու նվաճել են պատմական աղրբեջանական տարածքները մի քանի անգամ ցեղասպանության ենթարկելով աղրբեջանցիներին: Այս պայմաններում շարքային աղրբեջանցու մոտ մեկ հարց է ծագում. իսկ ինչու՞ մենք չենք վերականգնում պատմական արդարությունը, եթե ունենք այդքան մեծ ռազմավարական առավելություն հակառակորդի նկատմամբ: Թերևս այս հարցին իլիան Ալիսի պատասխանը ուշանում էր: Վերջին տարիներին Աղրբեջանի նախագահը Ղարաբաղյան հիմնահարցում իր որդեգրած տակտիկային տալիս էր հետևյալ սցենարային տրամաբանությունը. ինչու՞ նախահարձակ լինել, երբ Աղրբեջանը օրեցոր զարգանում, հզորանում է, բնակչության թվաքանակը աճում է, իսկ Յայաստան հակառակ գործնթացն է տեղի ունենում, ինչու՞ շտապել, եթե կարելի է մի-փոքք էլ համբերել և առավել հեշտությամբ ազատագրել աղրբեջանական տարածքները: Սակայն Ալիսի այս բանաձևը երկար չաշխատեց, և 2015-ի ընթացքում պարզ դարձավ, որ աղրբեջանական հասարակությունը ցանկանում է խոսքից գործի անցնելու մարտավարություն նեկավարության կողմց: Արդյո՞ք 2016թ. ապրիլը հասարակության պահանջը բավարարելու և նախկինում կատարած ռազմական ծախսերն արդարացնելու միտում ուներ, դժվար է ասել, սակայն մեկ բան պարզ է 2016թ. ապրիլին իլիան Ալիսը թուլացրեց իշխանությունների նկատմամբ դժգոհությունների ալիքը և ժամանակավորապես հետաձգեց իշխանության փոփոխության համար պայմանագրի գործնթացը:

Այստեղ պակաս կարևոր չէ նաև ռազմական բալանսավորման հարցի քննարկումը: Արդեն իսկ վերը նշված սոցիալ-տնտեսական խնդիրների պատճառով Աղրբեջանը վերջին երկու-երեք տարիներին ստիպված էր պակասեցնելու ռազմական բյուջեն: Փոխարենը, Յայաստանի Յանրապետությունը 2015թ. վարկային պայմանագիր էր կմքել Ռուսաստանի հետ, որը պետք է ուղղվեր վերջինից գենքի բավականին մեծ խնդրանակի ծեռքբերմանը: Ձենքի մատակարարումը Յայաստանին պետք է մեծ մասով իրականացվեր 2016թ. ընթացքում: Արդյո՞ք աղրբեջանական կողմը հաշվարկել էր, որ պահի լավագույնն էր հայկական կողմի նկատմամբ ունեցած ռազմական առավելության առումով, սակայն կասկածից վեր է, որ այդ երկու գործները կարող էին ազդեցնելուն ունենալ ռազմական գործողություններ սանձագերծելու վերաբերյալ Ալիսի կայացրած որոշման վրա: Այս մասին է վկայում նաև այն, որ Աղրբեջանը բոլոր միջոցներով ճնշումներ էր գործադրում պաշտոնական Թրիլիսիի վրա, որպեսզի Ռուսաստանից Յայաստան գենքի մատակարարումները չկատարվեն նրա տարածքով, կամ դրանք արվեն մեծ դժվարություններով:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Եվ, վերջապես, չմոռանանք արտաքին քաղաքական գործոնների մասին: 2015թ. նոյեմբերին թուրքիայի զինված ուժերի կողմից ռուսական ռազմական ինքնաթիռի խոցումից և ռուս-թուրքական հարաբերությունների սրացումից հետո լուրջ տեղաշրջեր գրանցվեցին տարածաշրջանում: Ավելի մնջացավ այն պնդունող, որն առաջացել էր սիրիական հարցում տարածաշրջանի երկու ուժային կենտրոնների միջև: Թեպես դժվար է պնդել այս երկու իրողությունների միջև ուղղակի կապի մասին, սակայն բացառված չեն նաև, որ Թուրքիային այդ ժամանակ ձեռնտու էր տարածաշրջանում նոր թեժ կետի ավելացումը, ինչը որոշակիորեն կշեղեր Ռուսաստանի ուշադրությունը մերձավորարևելյան խնդիրներից, իսկ դա կարելի էր անել իր ամենասերտ դաշնակից և եղայրակից Աղբեջանի ձեռքբերով:

Վերջարադրյալ բոլոր գործոններին, անշուշտ, գումարվում և փոխլրացնում է մեկ կարևոր հանգանանք ևս. 1994թ. հրադադարի ռեժիմի հաստատումից հետո Աղբեջանը հնարավորություն էր ստացել, օգտվելով ներքին և արտաքին նպաստավոր հանգանանքներից, ստառուս քվոյի փոփոխություն կատարելու: Աղբեջանական կողմը հարձակումը մեկնարկել է Արցախի Յանրապետության հետ սահմանային շփման գծի ամբողջ երկայնքով, սակայն առավել ինտենսիվ ռազմական գործողությունները ծավալվում էին հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան ուղղություններով: Երկու ուղղություններով էլ հայկական կողմը տարածքային դրոշակի կորուստներ ունեցավ: Թեպես պաշտոնական երևանը հետագայում այդ կորուստները զնահատեց ոչ ռազմավարական, բայց պետք չէ մոռանալ, որ ամեն դեպքում Արցախի Յանրապետությունը տարածքներ կորցրեց: Մենք առավելապես կարևորում ենք ինդրի բարոյահոգեբանական կողմը. 1994 թվականից ի վեր եղավ ստառուս-քվոյի փոփոխություն ի դեմք Աղբեջանի կողմից տարածքային նվաճման, որքան էլ որ բանկ լիներ Աղբեջանի համար դրա դիմաց վճարված գինը: Աղբեջանում պետական քարոզչությունը սկսեց ակտիվորեն աշխատել հասարակության մեջ պարտվածի հոգեբանության սինդրոմը կոտրելու ուղղությամբ, անձախադեալ էր նաև հասարակության համախմբվածության մակարդակը երկրում: Այսպիսով՝ տարիներ շարունակ ինտենսիվորեն վերագինված և հսկայական քանակությամբ ռազմական տեխնիկա կուտակած Աղբեջանի կողմից Արցախի և Աղբեջանի շփման գծում լայնամասշտար ռազմական գործողությունների սանձազերծումը կարելի է սպասված համարել, քանի որ բանակցություններում առաջընթացի բացալության պայմաններում ռազմական ճանապարհը Աղբեջանի համար մնում է ստառուս քվոյի փոփոխության միակ տարրերակը:

Վերջարադրյալ փաստարկները, հնարավոր է, այն տրամարանական մոտեցումներն են, որոնք կարող էին հանգեցնել 2016թ. գարնանը ռազմական գործողությունների սանձագերծման Աղբեջանի կողմից: Սակայն պետք չէ մոռանալ, որ Աղբեջանի դեկավարությունը հաճախ աչքի է ընկնում կատարած անպատասխանատու քայլերով և արկածախնդրությամբ, ուստի դժվար է ասել, թե ինչ էր մտածում Աղբեջանի ռազմաքաղաքական դեկավարությունը Արցախի Յանրապետության հետ սահմանային շփման գծի երկայնքով ռազմական գործողությունների սկսման պահին:

2016թ. ապրիլի 1-ի լուս 2-ի գիշերը Աղբեջանը ճախսահարձակ ռազմական գործողություններ սկսեց արցախա-աղբեջանական հականարտ զորքերի սահման գծի ողջ երկայնքով: Վերջինս գործի դրեց իր զինապահոցում եղած գրեթե ողջ զինատեսակները: Լայնորեն կիրառվեցին իսրայելական արտադրության հարվածային անօդաչու թռչող սարքեր: Վերջինիս կիրառումը նորություն էր և անակնելայի բերեց հայկական կողմին, քանի որ հայկական զինապահոցում չկային դրանց դեմ արդյունավետ պայքարելու զինատեսակները: Սակայն, մյուս կողմից էլ, հարց է ծագում, թե ինչու հայկական կողմը պատշաճ պատրաստված չէր այս կողմից, եթե վերջին տարիներին Աղբեջանը միլիարդների հասնող անօդաչուներ էր գնել, և այդ հմտությամբ հասանելի էր հայկական կողմի համար[3]:

Մյուս կողմից էլ, ապրիլյան բարուրյան սառը ցնցուղ էր մեզ համար: Հայկական կողմին հաջողվեց կասեցնել հակառակորդի անակնկալ հարձակումը, ավելին վերա-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՍՏՈՑ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

վաճվեցին մի քանի դիրքեր, որոնք հակառակորդը գրավել էր գրոհի առաջին օրը: Սակայն պետք է ընդունել, որ մինչ ռազմական գործողությունները հայկական հանրույթում գերիշխող էր այն տեսակետը, թե աղբեջանցիները չեն կարողանում կրվել և պատերազմի դեպքում մենք կիասնենք մինչև Բաքու: Կարծում ենք, որ ժամանակակից տեխնիկական հնարավորությունների, ինչպես նաև կրվող ուժի այլընտրանքային հնարավորությունների բազմազանության պայմաններում հայկական կողմը կարիք ունի փոքր-ինչ վերագնահատելու հակառակորդի հնարավորություններն ու դասեր քաղել եղած փորձից:

Հակամարտության կարգավորման միջնորդական առաքելության պատասխանատու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները այցելեցին Երևան, Ստեփանակերտ և Բաքու: Մինչ համանախագահները փորձում էին եզրեր գտնել նախագահների միջև հանդիպում կազմակերպելու և նրանց բանակցային սեղանի շուրջ նստեցնելու համար, պաշտոնական Բաքուն ՍՍԿ-ի Գլխավոր Ասամբլեայի հարթակում շրջանառության մեջ դրեց 1994թ. հրադադարի մասին համաձայնագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ գաղափարը՝ դրանով իսկ ևս մեկ անգամ ցույց տալով Աղրբեջանի ապակառուցողական դիրքորոշումը հիմնախնդիրը խաղաղ կարգավորելու բանակցային գործընթացում[4]:

Պաշտոնական երևանն էլ սկսեց խոսել ավելի կոշտ և պահանջատերի լեզվով. ՀՅ նախագահ Սերժ Սարգսյանը առաջարեց երեք հիմնական նախապայման, որոնց կատարման դեպքում միայն կիամաձայներ նստել բանակցությունների սեղանի շուրջ: Դրանք են.

- պատերազմ չվերսկսելու երաշխիքներ,
- շիման գոտում հրադադարի կատարման մեխանիզմների ստեղծում, այդ թվում միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրում,
- Աղրբեջանին որպես ապրիլյան ռազմական էսկալացիայի համար ագրեսորի ճանաչում[5]:

Մայիսի 16-ին Վիեննայում Մինսկի խմբի համանախագահող երկրների արտգործնախարարների նախաձեռնությամբ կայացավ Սարգսյան-Ալիև հանդիպումը, որից առաջ կողմերը նախնական համաձայնություն էին ծեռք բերել Սերժ Սարգսյանի առաջարած առաջին երկու սկզբունքների շուրջ: Իսկ Վիեննայում պայմանավորվածություն ծեռք բերվեց միայն սահմանային միջադեպերի հետաքննության և մոնիթորինգի մեխանիզմների ստեղծման մասով[6]: Սակայն, որպես այդպիսիք, չդրվեցին հստակ կատարման ժամկետներ, ինչը թույլ տվեց եզրակացնելու, որ սրանց կատարման դեպքում ևս հետագայում Աղրբեջանը կարող է մանեվրել:

Հաջորդ խնդիրը Արցախի Հանրապետության բանակցությունների սեղան վերադարձու հարցի քննարկումն էր: Վիեննայից հետո ուսւաստանցի համանախագահող իգոր Պոպովը հայտարարեց, որ բանակցությունների ինչ-որ փուլում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները պետք է վերադարձն բանակցային սեղանի շուրջ. չէ՞ որ խոսքն այս մարդկանց մասին է, ովքեր ապրելու են այդ տարածքում[7]: Սակայն փաստ է, որ պաշտոնական երևանին այդպես էլ չհաջողվեց օգտվել ստեղծված նպաստավոր իրավիճակից փոխելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Դա կարող էր արվել վերջինիս բանակցային սեղանի շուրջ վերադարձնել, կամ նրա ճանաչման միջոցով: Պաշտոնական երևանն ապրիլ-մայիս ամիսներին ակտով շրջանառության մեջ էր դրել Արցախի Հանրապետության ճանաչման, ինչպես նաև վերջինիս հետ ուազմական փոխօգնության պայմանագրի ստորագրման գաղափարները[8], սակայն վերջինս չափանց մեծ զգուշավորություն դրսելուց այս հարցում խուսափելով նոր հնարավոր ուազմական էսկալացիայից:

Հունիսի 20-ին ՈՂ նախագահ Վլադիմիր Պուտինի միջնորդությամբ կայացավ Սարգսյան-Ալիև հերթական հանդիպումը: Սպասելիքներն այս հանդիպումից մեծ էին, սակայն, ինչպես հետո պարզվեց, այս հանդիպումը հանձնրելու էր հերթական արարողակարգային հանդիպումների շարքը, քանի որ այստեղ, բացի նախկինում ծեռք բերված պայմանավորվածությունների կատարման մասին խոսելուց, ավելի առաջընթաց

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

չգրանցվեց[9]: Դամդիպումից անմիջապես հետո Աղրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Մամեդովը հայտարարեց, որ Պետերրուզում կողմերը համաձայնությամ են եկել Լեռնային Ղարաբաղի շրջապատող տարածքների փուլային վերադարձի վերաբերյալ[10]: Սա անմիջապես հերթվեց ՈՌ նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովայի կողմից, ով խեղաքյուրված անվանեց Մամեդովի հայտարարությունը[11]: Պաշտոնական Բաքվի ապակառուցողական հերթական քայլը անմիջապես կատարեց Իլհամ Ալիևը Պետերրուզոյան համդիպումից ընդամենը 5 օր անց հայտարարելով, որ սահմանային միջադեպերը հետաքննելու մեխանիզմ ստեղծելու կարիք չկա դրանով իսկ գրոյացնելով նախորդ ամսմներին ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները:

Մյուս հիմնական հարցն այճ է, որ այդպես էլ ոչ ԵԱՀԿ Մինսկի խմբի, ոչ անվտանգության հարցերով պատասխանատու միջազգային կառույցների կողմից պատշաճ և հասցեական գնահատականներ չսրվեցին ապրիլյան ռազմական էսկալացիայի մեջավորմերի մասին: Դանապատասխան գնահատականների բացակայությունն ու անպատճելիության զգացումն ավելի են ազատում Աղրբեջանի ձեռքբերը նոր հնարավոր ռազմական էսկալացիայի հարցում: Դրա վառ պացույցը 2016թ. հունիսին, սեպտեմբերին և նոյեմբերին Աղրբեջանի տարածքում, ավելի կոնկրետ՝ Արցախի Դանրապետության հետ շփման գժի մոտավայրում և Սահմանականում, Աղրբեջանի անցկացրած լայնամասշտար գորավարժություններն էին: Նոյեմբերին Աղրբեջանը գորավարժության հանեց իր ցամաքային գինուժի գրեթե բոլոր ստորարաժանումներն ու ամբողջ գինտեխնիկան[12]:

Նախագահների միջև նոր հանդիպում նախատեսվում էր օգոստոսին Փարիզում, սակայն նախկինում ձեռք բերված համաձայնությունների Աղրբեջանի կողմից կատարման ցանկության բացակայության պայմաններում այն չկայացավ: Փոխարենը ՈՌ նախագահը առանձին հանդիպումներ ունեցավ երկու երկու նախագահների հետ էլ: Մեպունքերին ԱՄ պետքարտուղար Ջոն Քերրին հայտարարեց, որ Դարաբաղյան հականարտության կարգավորման գործում դեռ հեռանկարներ չկան, քանի որ երկու երկրների ղեկավարները պատրաստ չեն[13]: Սա առաջացրեց պաշտոնական Բաքվի հիստերիան, քանի որ առաջին հերթին վերջինիս ձեռնոտու չէ այս հարցում ստատուս քվոյի պահպանումը:

Ղեկունքերի 9-ին ԵԱՀԿ նախարարական գագաթաժողովի շրջանակներում Մինսկի խմբի համանախագահող երեք երկրների արտաքին գերատեսչությունների ղեկավարները Սերգեյ Լավրովը, Ջոն Քերրին և Ժան-Մարկ Էյրոն ընդունեցին համատեղ հայտարարությունը[14], որով դատապարտում են ապրիլյան ռազմական գործողությունները, որանց ընթացքում ծանր գինտեխնիկայի կիրառումը: Դայտարարությամբ կոչ էր արվում նաև հարգել մայիսի 16-ին Վիեննայում և հունիսի 20-ին Սանկտ Պետերբուրգում ձեռք բերված համաձայնությունները: Այս հայտարարությունը ևս բազմաթիվ հարցերի տեղիք է տալիս: Ինչո՞ւ են միջնորդ կողմերը մշտապես խուսափում հասցեական մեղադրանքներ հնչեցնելուց, արդյո՞ք կոնկրետ մեղադրանքները և իրավիճակը սրող կողմի նկատմամբ վերահսկության մեխանիզմների սահմանումը չի կանչի հակամարտությունում նոր ժայթքումները:

Դիմանախնդիրի կարգավորման ուղղությամբ քանակցային գործընթացում առաջընթացին խոչընդոտող մյուս կարևոր գործուն այճ է, որ աղրբեջանական կողմը մշտապես խուսափում է նախկինում ձեռք բերած պայմանավորվածությունները կատարելուց կամ ընդհանրապես հերթում դրանց գոյությունը: 2017թ. նոյեմբերի 20-21 աշխատանքային այցով Դայաստան ժամանած Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Ս. Լավրովի հետ համատեղ մանուլի ասուլիսի ժամանակ ՀՀ արտգործնախարար է Նալբանդյանը, մարդաբան ներկայացնելով վերջին մի քանի տարիների բանակցային գործքաժի առանձնահատկությունները, նշեց, որ Աղրբեջանը մշտապես հետ է կանգնում նախկինում ձեռք բերված պայմանավորվածություններից[15]: Նետաքրիդ է, որ դա որևէ կերպ առարկում չգուավ բանակցային հիմնական միջնորդներից մեկի՝ ՈՌ արտաքին գործերի նախարարի կողմից:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՄԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Հակամարտության կարգավորման շուրջ 2017թ. բանակցային գործընթացը, կարող ենք փաստել, հենված էր այն նոր իրողությունների վրա, որոնք առաջ էին եկել ապրիլյան ռազմական գործողություններից հետո, ինչպես նաև այն հիմնական թեզիսների վրա, որոնք առաջադրվել էին Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի նախագահական հանդիպումների ժամանակ: Տարվա ընթացքում նախարարական մակարդակով և ԵԱՀԿ Սինսկի խմբի համանախագահների հետ հանդիպումները բազմաթիվ էին, սակայն կարծում ենք, որ դրանք բոլորն էին համալրում են հերթական արարողակարգային հանդիպումների շարքը[16]: Թերևս, մեկ պարզ պատճառով արարողակարգային կարելի է բնութագրել նաև երկու երկրների նախագահների միջև կայացած հանդիպումը. կարծատև դադարից հետո Ադրբեյջանը կրկին վերադառնում է դիվերսիոն գործողությունների և դիպուկահարների գործադրման տակտիկային: Բանակցող երկրների դեկավարների միակ հանդիպումը կայացել է հոկտեմբերի 16-ին ժմւառում: Կայացած առանձնազրույցից հետո նախագահները համեմու են եկել համատեղ հայտարարությամբ: Դրանում նշվում է, որ կողմերը պայմանավորվել են ավտիվացնել բանակցային գործընթացը և լրացուցիչ քայլեր ծերնարկել սամանային շփման գծում լարվածությունը թուլացնելու ուղղությամբ[17]: Այնուհետև, հանդիպելով Շվեյցարիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, ՀՀ նախագահը խոսելով ադրբեյջանցի գործնկերող հետ կայացած հանդիպման արդյունքների մասին, ասել է, որ կողմնոր կանգ չեմ առնել հակամարտության կարգավորման կոմիտետ տարրերակի շուրջ: Նախագահը շեշտել է նաև, որ հիմնախնդրում մեզ համար միակ լուծումն այն է, որ Պարաբար լինի Ադրբեյջանից դուրս[18]:

2017թ. ընթացքում ՀՀ նախագահը մեկ անգամ չէ, որ խոսել է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման և Արցախի Հանրապետության անկախ գոյության ճանաչման որպես հիմնախնդրի կարգավորման միակ տարրերակի մասին: 2017թ. փետրվարին Կարնեգի հիմնադրամի Բրյուսելի գրասենյակում ունեցած ելույթում, անդրադարձնալով Ղարաբաղյան հիմնախնդրին և Ղարաբաղյան հարցում ստատուս քվոյի փոփոխության մասին ադրբեյջանական մոտեցումներին, նախագահ Սարգսյանը ասել է, որ կա ստատուս քվոյի փոփոխության մեկ ծև՝ Արցախի Հանրապետության ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչումը Ադրբեյջանի կողմից[19]: Նշենք, որ վերջին տարիներին պաշտոնական Բաքվի Ղարաբաղի կարգավիճակի մասով ստատուս քվոյի փոփոխության անհրաժեշտության վերաբերյալ հայտարարություններն ավելի ու ավելի հիստերիկ և սուր բնույթ են կրում:

Ավելի ուշ՝ 2017թ. աշնանը, ՄԱԿ-ի 72-րդ նատաշրջանում Գլխավոր Ասամբլեայի հարթակից ելույթի ընթացքում, անդրադարձնալով Ղարաբաղյան հիմնախնդրին, ՀՀ նախագահը նշել է, որ հակամարտության կարգավորման ցանկացած ելքի դեպքում Լեռնային Ղարաբաղը չի կարող ավելի ցածր կարգավիճակ և ազատություն ունենալ, քան ունի այսօր, իսկ Արցախի ինքնորոշումը և անկախությունն արդեն իսկ կայացած փաստ է, և դրամից նահանջել չի լինի[20]: Ընթացիկ տարվա հունվարի 30-ին էլ, հանդիպելով ՀՀ ԱԳՆ դեկավար կազմի հետ, նախագահ Սարգսյանը գնահատել է Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ վերջին տաս տարիներին գործադրած ջանքերն ու արդյունքները: Վերջինս կարծիք է հայտնել, որ այստեղ Հայաստանի դիրքերը շեշտակիորեն ամրապնդվել են: Նախագահը նաև ավելացրել է, որ հայկական կողմը կարդացել է ամրապնդել ինքնորոշման իրավունքը որպես հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունք[21]:

Արդյո՞ք այս ամենը խոսում է նրա մասին, որ հայկական կողմը հստակեցնում է, ավելի կոնկրետ կոշտացնում է իր դիրքորոշումը Ղարաբաղյան հիմնախնդրում: Կարծում ենք, որ ապրիլյան քառորյահց հետո ՀՀ նախագահի և արտաքին քաղաքական գերատեսչության դեկավարների հայտարարությունները վկայում են միայն դրա մասին: Սակայն, մյուս կողմից է տեսանում ենք, որ հակառակ գործընթացն է ընթանում հարևան Ադրբեյջանում: Վերջինիս դեկավարության հունտորաբանությունում ավելանում են պատերազմի մասին սպառնալիքները: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ 2016թ. ապրիլյան ռազմական գործողություններից հետո ծավալված բանակցային գործընթացը եական պտուղներ

## **ՄԵՄՐՈԴ ՄԱՀԾՏՈՑ ՀԱՍԱԼԱՄԱՐՄԻ ԼՐԱՏՈՒ 2018**

չի տվել, ավելի հայտնի կողմերի դիրքորոշումները ավելի ու ավելի են հեռանում միմյանցից՝ չբացառելով ցանկացած սցենարի զարգացում Ղարաբաղյան հիմնահարցում:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Աղրբեջանի ռազմական բյուջեն կարող է շուրջ 27 տոկոսով նվազել,-  
<https://razm.info/89212>
2. Աղրբեջանում տնտեսական ճգնաժամը գնալով խորանում է,-  
<http://armedia.am/arm/news/28018/adrbejanum-tntesakan-tchgnazhamy-gnalov-khoranum-e.html>
3. Խորայելական Օրբիտեր անօդաչու թռչող սարք՝ աղրբեջանական քարոզության միջոց,- <https://razm.info/27419>
4. ՀՀ ԱԳՆ. ապրիլի 5-ի պայմանավորվածությունը չի կարող փոխադրնել զինադադարի համաձայնագրին,- <http://mamul.am/video/26598528/>
5. Նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը ինքնաթիռում,-  
<https://www.youtube.com/watch?v=WcyRRYSJSw8>
6. Մինսկի խմբի համանախագահող երկրները Վիեննայի հանդիպման արդյունքներով հայտարարություն են տարածել,-  
<https://armenpress.am/arm/news/847444/minski-khmbi-hamanakhagahox-erkrnery-viennayi-handipman.html>
7. «Որոշակի փուլում Ղարաբաղը պետք է վերադառնա գործընթաց». Իգոր Պոպով,- <http://www.1in.am/238655.html>
8. Սերժ Սարգսյան. անհրաժեշտ է աշխատել ԼՂՀ-ի հետ ռազմական փոխօնության պայմանագիր կնքելու ուղղությամբ,-  
<https://news.am/arm/news/320230.html>
9. Սամկան Պետերբուրգում կայացել է եռակողմ հանդիպում Հայաստանի, Ռուսաստանի և Աղրբեջանի նախագահների միջև -  
<http://www.president.am/hy/press-release/item/2010/06/17/news-1059/>
10. Մոսկվան, Երևանն ու Բաքվում պայմանավորվել են կարգավորման փուլային տարբերակի շուրջ. Մամեդով,- <https://www.civilnet.am/news/2016/06/22/peterburg-meeting-details-mammadov-ans/295478>
11. ՈԴ ԱԳՆ. Մամեդովի հայտարարությունը «անբարեխիղ է եւ խեղաթյուրված»,-  
<http://www.aravot.am/2016/06/23/707371/>
12. Աղրբեջանում մեկնարկել է խոշորամասշտար գորավարժություն,-  
<https://razm.info/91458>
13. Քերի. «ԼՂ հակամարտության հաղթահարման պայմանները դեռ չեն ստեղծվել»,- <http://www.7or.am/arm/news/view/114627/>
14. Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries <- <http://www.osce.org/mg/287531>
15. Հայաստանի արտաքին գործերի նախարարի ելույթը և պատասխանները լիազորների հարցերին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի հետ մամուլի ասուլիսի ընթացքում,- [http://www.mfa.am/hy/press-conference/item/2017/11/21/fm\\_lavrov\\_asulis/](http://www.mfa.am/hy/press-conference/item/2017/11/21/fm_lavrov_asulis/)
16. Նախագահը ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին,-  
<http://www.president.am/hy/press-release/item/2017/06/10/President-Serzh-Sargsyan-met-with-the-delegation-of-the-OSCE-Minsk-Group/>
17. Joint Statement by the Foreign Ministers of Armenia and Azerbaijan and the Co-Chairs of the OSCE Minsk Group <- <http://www.osce.org/minsk-group/350091>

## **ՄԵՍՐՈՒ ՄԱՀԾՈՅ ՀԱՄԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018**

18. Շվեյցարիայի համայնքի հետ հանդիպմանը Նախագահը ներկայացրել է ժնկան բանակցությունների արդյունքները,- <http://www.president.am/hy/press-release/item/2017/10/16/President-presented-the-results-of-negotiations-in-Geneva>
19. Աղօախի ինքնորոշման իրավունքի ճանաչման դեպքում է հնարավոր ստատու քվոյի փոփոխություն,- <http://www.aniarc.am/2017/02/28/serzh-sargsyan-nk-brussels-status-quo/>
20. Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանում,- <http://m.president.am/hy/statements-and-messages/item/2017/09/20/President-Serzh-Sargsyan-speech-UN-General-Assembly/>
21. Նախագահը հանդիպում է ունեցել ԱԳՆ դեկանության կազմի հետ,- <http://www.president.am/hy/press-release/item/2018/01/30/President-held-a-meeting-in-the-foreign-ministry/>

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացը 2016թ. քառորյա պատերազմից հետո  
Ռոման Կարապետյան**

Հոդվածում ներկայացվում է Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացը 2016-2018 թվականներին: Նախ և առաջ՝ փորձ է կատարվել մեկնարաբանելու և վեր հանելու այն պատճառները, որոնք կարող են հանգեցնել 2016թ. ապրիլին Ադրբեյջանի կողմից ռազմական գործողությունների սանձազերծմանը: Այնուհետև ներկայացվել են այն նոր իրողությունները, որոնք տեղ են գտել բանակցային գործընթացում: Մասնավորապես ներկայացվել են բանակցող կողմերի դիրքորոշումներում տեղ գտած որոշակի փոփոխությունները, դրանց առանձնահատկությունները: Ելնելով առկա փաստերից և հականարտության զարգացման դինամիկայից՝ փորձ է արվել նաև հետագա զարգացումների վերաբերյալ որոշակի վերլուծական-կանխատեսական մոտեցումներ կիրառել:

### **РЕЗЮМЕ**

**Процесс урегулирования Нагорно-Карабахского конфликта после четырехдневной войны 2016г.**

**Роман Карапетян**

**Ключевые слова:** Карабахский конфликт, Армения, Азербайджан, Республика Арацах, четырехдневная война, безопасность, военная эскалация, Минская Группа ОБСЕ.

В статье представлен процесс урегулирования Карабахского конфликта в 2016-2018 годах. Прежде всего была сделана попытка прокомментировать и объяснить причины, которые могли привести к военной операции со стороны Азербайджана в апреле 2016 года. Затем были представлены новые реалии в переговорном процессе. В частности были представлены некоторые изменения в позициях сторон переговоров и их спецификация. Основываясь на существующих фактах и динамике развития конфликтов, была сделана попытка применить некоторые аналитические и прогностические подходы к дальнейшим развитиям.

SUMMARY

**The process of settlement of the Nagorno-Karabakh conflict after a four-day war in 2016**  
**Roman Karapetyan**

**Keywords:** Nagorno-Karabakh conflict, Armenia, Azerbaijan, Republic of Artsakh, four-day war, security, military escalation, OSCE Minsk Group.

The article presents the process of the settlement of the Karabakh conflict in 2016-2018. First of all, an attempt was made to comment and explain the reasons that could lead to the invasion of military operations by Azerbaijan in April 2016. Then, new realities in the negotiation process were presented. In particular, some changes in the positions of the negotiating parties and their specification were presented. Based on existing facts and the dynamics of the development of conflicts, an attempt was made to apply some analytical and prognostic approaches to further developments.